

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԽՈՒՄԲ

Հայերենը ամենաշատ բարբառներ ունեցող լեզուներից է. դա պայմանավորված է հայ ժողովրդի պատմական անցյալով, Հայաստանի աշխարհագրական պայմաններով: Մայր բարբառներից առաջացել են նորերը. նրանց թիվը տեղահանությունների ու գաղթների հետևանքով բազմապատկվել է: Հայ բարբառագիտությանն այժմ հայտնի է վաթսուհի չափ բարբառներ և այդքան էլ ենթաբարբառներ: Թերևս այդ է պատճառը, որ բազմաթիվ հայագետներ մեծ խնամքով ուսումնասիրել են հայերենի բարբառները:

Հրապարակի վրա է Ա. Ս. Ղարիբյանի «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» աշխատությունը, նվիրված Արամոյի Փարուսիի և Եղեսիայի բարբառներին: Դրանով պրոֆ. Ա. Ղարիբյանը ամբողջացնում է նորահայտ ճյուղերի բարբառների շարքը: Հայերեն բարբառների ճյուղերը լույս ճյուղեր չեն, այլ բարբառային համաստեղություններ կամ ասոցիացիաներ: Ամեն մի ասոցիացիա բարբառների խմբային միություն է գոյացման իր որոշակի առանձնահատկություններով:

Քննարկվող աշխատության մեջ հեղինակը սահմանագծում է մի քանի տարի առաջ իր կողմից հայտնաբերված Քեսաբի, Սվնդիայի, Բեյլսնի նորահայտ բարբառները, ապա քննում է Արամոյի, Փարուսիի ու Եղեսիայի բարբառների հնչյունական, ձևաբանական և բառագիտական առանձնահատկությունները, տալիս յուրաքանչյուրի բառարանը և տեքստերը:

Որո՞նք են այս նորահայտ բարբառների բնորոշ գծերը և ի՞նչ նորություն են բերում հայագիտությանը:

Եւմենից ուշագրավը Արամոյի բարբառն է, որի ձայնավորները շեշտի տակ երկբարբառ են կամ երկար ձայնավոր: Այդ կարգի երկբարբառներով բարբառը նույն է կամ շատ նման գրաբարին, իսկ երկար ձայնավորներով՝ հնդեվրոպական նախալեզվին: Երկար ձայնավորներն արդյունք են երաժշտական կամ տոնիկ շեշտի. այդպիսի շեշտով հայերենը ուրիշ բարբառներ չունի:

Որ տոնիկ շեշտով Արամոյի բարբառը ներկայացնում է նախահայերենի վիճակը. այդ է հաստատում նաև ծ աֆրիկատի բացակայությունը, Լինչսիս հայտնի է, հնդեվրոպական ընտանիքի սլավոնական լեզուները ծ-ն դարձրել են զ. այդպես էլ Արամոյի բարբառը, իսկ այս նշանակում է, որ Արամոյի բարբառը մեր հնագույն բարբառներից է:

Այդ է ապացուցում նաև ա և ը ձայնավորների գործածությունը:

Պրոֆ. Հ. Աճառյանի հաշվումներով հայերենի բարբառներում ա-ով սկսվող բառերի թիվը կազմում է ամբողջ հայերենի բառերի մեկ վեցերորդը. դա պատահական չէ. հին հայերենի հատկությամբ բաղաձայնով, առավել ևս երկու բաղաձայնով սկսվող բառերից առաջ ավելացել է ա. այդ օրերը հարազատությամբ պահպանվել է Արամոյի բարբառում: Այդ օրերը, սակայն, ուշ շրջանի հայերենում փոխվել է. երկու բաղաձայնի արանքը մտել է անգիր ը. այս նոր օրերը Արամոյի բարբառում գործում է բացառաբար՝ ոտո՛ւ հնչյունակապակցությունների մեջ միայն:

Հնդեվրոպական ցուցական դերանվան ի արմատը առանձին չի գործածվել ոչ գրաբարում և ոչ էլ ուրիշ բարբառներում, որը, սակայն, պահպանվում է Արամոյի Փարուսիի բարբառներում:

Չափազանց ուշագրավ են նաև այն բառերը, որոնք սովորական գործածություն ունեն Արամոյի բարբառում, բայց հազվագյուտ են կամ իսպառ բացակայում են գրաբարում: Այդ բառերից է նաև հնդեվրոպական դուր Վայրա գոյական անունը, զա-զի և ի դերանունները, որոնք պահպանվել են սանսկրիտներում, լատիներենում, հին սլավոներենում, գոթերենում և այլն:

¹ Ա. Ս. Ղարիբյանի Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, ԳԱ հրատարակչություն, Երևան, 1958, էջ 163:

Մեր հաշվումներով գրաբարը և ընդհանրապես հայերենը պահպանել է 18 դերանվանական արմատ, որոնք գործ են ածվում որպես անկախ բառեր. ածանցումների ու բարդության ճանապարհով այդ արմատներից կազմվել են 1300-ի չափ բառեր. Որպես շփոխառնվող և ամենից հաճախ գործածվող բառեր, դերանունները կարևոր նշանակություն ունեն բարբառների համար՝ ոչ միայն նրանց բառապաշարի հարստության տեսակետից, ծնծե Արամոյի բարբառը պահպանել է հնդեվրոպական նախալեզվի մի շարք բառեր և դերանուններ, որոնք չկան դրաբար հայերենում, ապա միայն այդ բավականաչափ հիմք է տալիս պնդելու, որ Արամոյի բարբառը գոյություն ունի մեր էրայից շատ առաջ:

Այդ եզրակացությունը հաստատում է նաև Քարուսիի բարբառը. Այս բարբառի բնորոշ հատկանիշներից մեկն այն է, որ բառամիջի ձայնավորը հնչյունափոխության է ենթարկվում ձևարանական և արտասանության քմայնացումից հրաժարվելու նպատակով, ներքին թեքման այդ միջոցը, որով արտահայտվում է բառի զանազան իմաստով գործածվող պաշտոնը, չունի ոչ աշխարհաբարը և ոչ էլ մեր բարբառներից որևէ մեկը. Այդ երևույթի հետքերը կան հնդեվրոպական մի շարք լեզուներում, օրինակ՝ գրաբարում ձայնդարձը, որ շատ լավ ուսումնասիրել է պրոֆ. Աճառյանը իր լիակատար քերականության գոյական անվան նվիրված հատորում, դարձել է ներքին թեքում և խոնարհման խառը տիպի ցուցանիշ:

Հնչյունափոխության միջոցով բառի պաշտոնը փոփոխելու երևույթի պատճառներն ու հիմնավորումները գիտությանը դեռևս հայտնի չեն, բայց, չնայած դրան, հայտնի է, որ այդ երևույթը շատ հին է. Ուրեմն, կասկած չկա, որ Քարուսիի բարբառը ներկայացնում է հին հայերենի վիճակը հիշեցնող բարբառ:

Սակայն, մեր կարծիքով, այդ եզրակացության համար ամենաուժեղ կովանքն է նախդրի գործածությունը է Արամոյի բարբառում: Արամոյի բարբառը անվթար պահպանել է ի նախդրի գործածությունը ոչ միայն գրաբարյան բոլոր պաշտոններով, այլև այնպիսի պաշտոններով, որոնք մոռացվել են գրաբարում:

Այս բոլոր բավականաչափ հիմք են տալիս հեղինակին պնդելու, որ Արամոյի ու Քարուսիի բարբառները ժամանակակից են հին հայերենին:

Պատմությունը այնպես է խառնել մեր բարբառները, որ նրանցից շատերի նախապատմությունը և բուն հայրենիքը որոշել շատ դժվար է. Քաջ ծանոթ լինելով մեր ժողովրդի պատմությանը, հեղինակը ճիշտ է որոշում ուսումնասիրության նյութ դարձած բարբառների հայրենիքը:

Հայոց պատմության ընձեռած օվայաներով և բարբառների հնչյունական ու ձևարանական երևույթների բնության շնորհիվ հեղինակը մի շարք կարևոր ընդհանրություններ է տեսնում Տիգրանակետի, Սեբաստիայի և հարևան բարբառների մեջ. Այդ ընդհանրություններն թվում մենք կավելացնենք բաղաձայնների կրկնությունը, որի համար բազմաթիվ օրինակներ է առաջարկում Նորահայտ Քարուսիի բարբառը. Այժմ արդեն հաստատ կերպով կարելի է ասել, որ թաղամայնների կրկնությունը Քարուսիի բարբառում, ինչպես և Տիգրանակետի բարբառի Հազգոյի և Հազգոյի ենթաբարբառում ու Սեբաստիայի բարբառում տեղի է ունենում հայացի ձևով և ոչ մի կապ չունի օտար լեզուների ազդեցության հետ:

Այսպիսով, հայագիտությանը հայտնի է դառնում բարբառային ասոցիացիայի մի նոր լայնածավալ հայրենիք՝ Հյուսիսային Սիրիան և Միջագետք՝ Մալաթիան, Արարկիքը, Բալուն և այլն: Այստեղ է, որ ձևավորվում են նորահայտ աշա ճյուղի բարբառները:

Այս ճյուղի բարբառները հարուստ են երկրաբառներով, եռաբարբառներով և, որ զարմանալի է, քառաբարբառներով (Քարուսիի բարբառն ունի չորս քառաբարբառ) և այլն:

Բոլոր ժամանակներում ենթարկված լինելով համաժողովրդական հայերենի ազդեցության և ներկայացնելով նրա տերիտորիալ բաժանումները, բարբառները, նամանավանդ Արամոյի ու Քարուսիի բարբառները, պահպանել են բազմաթիվ ընդհանրություններ հնագույն հայերենի, գրաբարի ու միջին հայերենի հետ:

Մինչև վերջերս շատերը վիճում էին գրաբարի համաժողովրդական խոսակցական լեզու լինելու, գրաբարին ժամանակակից բարբառների գոյության հարցերի շուրջը. Սակայն այդ վիճարը չեն սպառվում, որովհետև բարբառներից շատերը, մանավանդ մայր բարբառները, բոլոր ամենայնի, չեն ուսումնասիրվում, Պրոֆ. Ա. Ղարիբյանը վեր է հանում զ, ի, յ նախդիրների, կապերի, ցուցական դերանունների կրկնակի ձևերի (այս, այսմիկ և այսօրիկ, այդ, այդժիկ և այդորիկ) գործածության, բացառական հոլովի, պատճառական բայերի անցյալ կատարյալի կազմության, բայերի խոնարհման եզակի երրորդ դեմքում են աճականի պահպանման և ընդհանրապես խոնարհման սխտիսի բազմաթիվ օրինաչափություններ, որոնք վկայում են, որ գրաբարը խոսակցական լեզու է եղել:

Արամյոյի բարբառը միակն է մեզ հայտնի բարբառներից, որը վերացնելով օտ և նման հոլովումները, բոլոր բառերը, սակավ բացառությամբ, ենթարկել է ա հոլովման արտաքին թևքման: Հնդկական հանձին Եղեսիայի բարբառի. ցույց է տալիս բայի սահմանական ներկայի ու շարունակական ներկայի կազմության ձևերի՝ կր և հա մասնիկների իմաստային արժեքները և բնութագրում դրանց զարգացման ընթացքը:

Պրոֆ. Ա. Ղարիբյանը բարբառային հնչյունական երևույթները քննել է ոչ միայն բառարանի նյութի վրա, այլև՝ կոնտեքստի: Դրանով նա ավելի սպառել է դարձրել բարբառների հնչյունական քննությունը և վեր է հանել մի շարք արժեքավոր երևույթներ, որոնք կարող են որպես բանալի ծառայել բարբառների ու համաժողովրդական հայերենի հնչյունական և ձևաբանական բարդ համարվող հարցերը լուսաբանելու համար:

Հատկապես ուշագրավ են օժանդակ բայի անկախ և կոնտեքստային գործածության հետ կապված փոփոխությունները, բայի խոնարհման անցյալի և անցյալ կատարյալի, անփոփոխ չ՝ մասնիկի գործածության և այլ երևույթներ:

Հնդկականի դեմ կարելի է առարկել Արամյոյի բարբառի ճյուղային պատկանելության հարցում:

Պրոֆ. Հ. Աճառյանն իր «Հայ բարբառագիտության» մեջ նշում է, որ Արամյոյի բարբառը իր որոշ հատկանիշներով թխուրունկ հնութիւն մ' ունի» (էջ 213), որոշ երևույթներով էլ բացառիկ է: Սակայն մոտիկից ծանոթ չլինելով այդ բարբառին, պրոֆ. Հ. Աճառյանը այն դնում է Անտիոքի բարբառի շարքում, որպես իր ճյուղի բարբառ: Պրոֆ. Ա. Ղարիբյանը, ելնելով շարունակական ներկայի կազմության եզանակից, Արամյոյի բարբառը համարում է հա ճյուղի: Այս բարբառը բայի սովորական ներկա ժամանակը, որը բարբառների ճյուղային պատկանելության որոշիչն է, կազմում է գրաբարակերպ. նշանակում է Արամյոյի բարբառը Խոտրջուրի բարբառի հետ միասին կազմում է մեր բարբառների գրաբարակերպ և ամենահետաքրքիր ճյուղը: Այդ բանը ընդունում է նաև հնդկականը: Մնում է որոշել այդ ճյուղի ուրիշ, դեռևս անհայտ բարբառները:

«Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ»-ը մի նոր քայլ է հայ բարբառագիտության ստեղծման, Ամենայն խրախուսանքի արժանի են ոչ միայն պրոֆ. Ա. Ղարիբյանի որոնումները ու քրտնաջան աշխատանքը, այլև դիտության նախանձախնդիր Ալ. Փաշայանի, Ա. Հարությունյանի, Գ. Գյուղալյանի և Հ. Դևյիրմանջյանի աշխատանքը տակավին անհայտ մայրենի բարբառները գիտությանը տրամադրելու համար:

Ռ. Բ Ա Ղ Բ Ա Մ Յ Ա Ն